

Այս աեսակ այցեր կամ առաքելութիւններ շարունակուած ըլլալու են յաջորդ տարիներուն ալ, որովհետեւ 1421ին հապէշ քահանայ մը կը գտնուէր Խիզանի կողմերը, ուր և կը նահատակուէի ու կը թաղուի Բարեձորոյ Ս. Աստուածածնի վանքը (Յ. Նալբանդեան՝ Արեւ, 16 Փետր. 1935) կամ, ըստ Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեանի, նոյն թուականին «հայե՛ց նահատակ կաւարից ի Խիզան եւ ամփոփից ի վանս Բարեձորոյ» (տես Դիւան Հայոց Պատմութեան. Ժ. հատոր, էջ 495):

Փոխադարձաբար կը յիշուի ԺԱ. դարէն առաջ, Եւստափիոս անուն հայ եպիսկոպոսի մը իր աշակերտներուն հետ միասին Եթովպիա այցելութիւրը. կրօնական առաքելութեամբ, ինչպէս կը կարծէ Բր. Ֆ. Տուրայեւ (տես Արեւ, 1923 Ապրիլ 23, թ. 1269):

Նոյնպէս կը յիշուի, թէ ծագումով հայ Աբրահամ Գլորգ անուն հապէշ կրօնաւոր մը 1440ին իպատիւ Ս. Կոյսին գրած է հապէշերէն շարականներ, որոնք մեծ ժողովրդականութիւն կը վայելէին Հապէշներու մէջ (Արեւ, նոյն): Նոյնպէս կը հաստատուի, թէ Տէսէն քաղաքին մօտ կը գտնուի հայ ոճով վանք մը, «Հայք» կոչուած տեղացիներէն և կառուցուած գրեթէ Աբրահամ Գլորգի գործունէութեան օրերուն:

1500ական թուականներուն, հապէշ թագաւորին մտերիմ խորհրդականն էր Մատթէոս անուն հայ եպիսկոպոս մը, որ քաղաքական առաքելութիւն մը կատարեց ղէպի Փորթուկալ, ինչպէս պիտի տեսնուի:

1550ին Ստեփաննոս Ե. Սալմաստեցի կաթողիկոս իր Հռոմ՝ այցելութեան ատեն Պետրոս անուն հապէշ քահանայէ մը ասպնջականութիւն և խնամք գրտած ըլլալուն՝ զայն տիրաբար արքեպիսկոպոս կը